ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

26 հունիսի 2019թ.

ք. Երևան

Ժամը 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արմեն Խաչատրյան

Հանձնաժողովի անդամներ՝ Հայկ Հովհաննիսյան, Ասատուր Ասատրյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Նելլի Աբովյան

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման, արդյունքների ամփոփման և պայմանագիր կնքելու մասին.

1. ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար 2019թ.-ի ընթացքում ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» ՔԿ հիմնարկի բաղնիքի տաք ջրամատակարարման համակարգի նորոգման և ՀՀ ԱՆ «Աբովյան» ՔԿ հիմնարկի արտաքին էլեկտրական մալուխի անցկացման աշխատանքների ձեռքբերման նպատակով, գնանշման հարցման ձևով, կազմակերպված **«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-19/1»** ծածկագրով ընթացակարգի գնահատման ընթացքում ՀՀ ՊԵԿ-ի կողմից ուղարկված տեղեկատվության համաձայն՝ N2 չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Աջակցություն Դատապարտյալին» հիմնադրամը 14.06.2019թ.-ի դրությամբ ուներ ժամկետանց պարտավորություն՝ 19540 ՀՀ դրամի չափով: Հրավերի պահանջներից ելնելով՝ գնահատող հանձնաժողովը տվեց շտկման հնարավորություն՝ 3 աշխատանքային օր: 25.06.2019թ.-ին «Աջակցություն Դատապարտյալին» հիմնադրամի կողմից հրավերով սահմանված ժամկետում ներկայացվեցին շտկված փաստաթղթերը և գնահատող հանձնաժողովը դրանք գնահատեց բավարար: **«ԶԻ ԷՆԴ ԶԻ ՔՈՆՍԹՐԱՔԹ» ՍՊԸ-ի** կողմից նույնպես հրավերով սահմանված ժամկետում ներկայացվեցին օրենսդրությամբ և հրավերով նախատեսված փաստաթղթերը, որոնք համապատասխանում են հրավերի պահանջներին, ինչպես նաև, հիմք ընդունելով հրավերի Հավելված 6-ով նախատեսված տեղեկատվությունը ուղարկված ՀՀ ՊԵԿ-ի կողմից որոշեց՝

1.1. **«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-19/1»** ծածկագրով գնման ընթացակարգի՝

N 1 չափաբաժնի մասով ընտրված՝ հաղթող մասնակից ճանաչել **«ԶԻ ԷՆԴ ԶԻ ՔՈՆՍԹՐԱՔԹ» ՍՊԸ-ին**,

N 2 չափաբաժնի մասով ընտրված՝ հաղթող մասնակից ճանաչել **«Աջակցություն Դատապարտյալին» հիմնադրամին**,որոնց առաջարկած գները նվազագույնն են և չեն գերազանցում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

1.2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է):

1.3. «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով՝ ընտրված մասնակցի հետ կնքել գնման պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի.

Նախագահ՝ ---------- Ա.Խաչատրյան

Քարտուղար՝ ---------- Ն. Աբովյան

Գնահատող անդամներ՝

1. ---------- Հ. Հովհաննիսյան

2. ---------- Ա.Ասատրյան